

# ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

## ՖԻԶԻԿԱ

### ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագլության համար: **Թեստ-գրքույկը չի սուսանվում: Սուսանվում է միայն պատասխանների ճևաքուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաքուղը: Պատասխանների ճևաքուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ո՞ր մեծությունն են անվանում ճանապարհ:

- 1) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:
- 2) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:
- 3) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 4) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:

2


Շանապարիի հորիզոնական տեղամասում ավտոմեքենան արգելակում է: Ինչպե՞ս է ուղղված նրա արագացումը:

- 1) Ուղղաձիգ դեպի ներքև:
- 2) Արագացումը զրո է:
- 3) Շարժման ուղղությամբ:
- 4) Շարժմանը հակառակ ուղղությամբ:

3

Նկարում պատկերված է ուղղաձիգ դեպի վեր արձակած նետի արագության արոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահին նետը կհասնի իր հետագծի ամենավերին կետին: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) 8 վ:
- 2) 0 վ:
- 3) 2 վ:
- 4) 4 վ:



4

Ո՞րն է ուժի միավորը՝ ըստ ՄՀ-ի հիմնական միավորների:

- 1) 1 կգմ/վ:
- 2) 1 կգ մ/վ<sup>2</sup>:
- 3) 1 կգմ:
- 4) 1 կգմ<sup>2</sup>/վ<sup>2</sup>:

5

Մարզիկը քոչում է որոշակի բարձրությամբ հորիզոնական ձողի վրայով: Ո՞ր պահին է նրա վրա ազդում ծանրության ուժը:

- 1) Բոլոր պահերին:
- 2) Թափավազքի ժամանակ:
- 3) Միայն գետնից հրվելու պահին:
- 4) Գետնին վայրէջք կատարելիս:

6


Դադարի շփման ուժի առավելագույն արժեքն ինչպե՞ս է կախված հենարանի հակազդեցության ուժից:

- 1) Այդ ուժերը միշտ հավասար են:
- 2) Ուղիղ համեմատական է:
- 3) Հակադարձ համեմատական է:
- 4) Կախված չէ:

7

Որքա՞ն է նկարում պատկերված ճոճանակի՝ տվյալ դիրքում ծանրության ուժի մոմենտը կախման կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:

- 1)  $mgl \operatorname{ctg} \alpha$ :
- 2)  $mgl \cos \alpha$ :
- 3)  $mgl \sin \alpha$ :
- 4)  $mgl \operatorname{tg} \alpha$ :



8

Հաստատուն հզորության դեպքում ավտոմեքենայի արագությունը փոքրացավ երկու անգամ: Ինչպե՞ս փոխվեց քարշի ուժը:

- 1) Փոքրացավ 4 անգամ:
- 2) Մեծացավ 2 անգամ:
- 3) Փոքրացավ 2 անգամ:
- 4) Մեծացավ 4 անգամ:

9

Սեղանին դրված են նույն չափերի փայտե և կապարե խորանարդաձև չորսուներ: Ո՞ր չորսուն ունի ավելի մեծ պոտենցիալ էներգիա հատակի նկատմամբ:

- 1) Չորսուների պոտենցիալ էներգիաները հավասար են զրոյի:
- 2) Կապարե չորսուն:
- 3) Փայտե չորսուն:
- 4) Չորսուների պոտենցիալ էներգիաները հավասար են:

10


Անորում՝ ազատ շարժվող միսցի տակ, լցված է  $\rho$  խտությամբ հեղուկ: A և B կետերում ճնշումների տարրերությունը՝  $p_A - p_B = \rho gh$ : Որքա՞ն կլինի այդ տարրերությունը, եթե S մակերեսով միսցի վրա դնենք m զանգվածով բեռ:

1)  $\frac{mg}{S}$ :

2)  $p_A - p_B = \rho gh$ :

3)  $p_A - p_B = \rho gh - \frac{mg}{S}$ :

4)  $p_A - p_B = \rho gh + \frac{mg}{S}$ :



11


Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի կորդիմաստի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տատանումների լայնույթը:

1) 4 սմ:

2) 20 սմ:

3) 10 սմ:

4) 5 սմ:



12

Ի՞նչ է ցույց տալիս Ավոգադրոյի հաստատունը:

1) Նյութի միավոր զանգվածում պարունակվող մոլեկուլների թիվը:

2) Նորմալ պայմաններում 1 սմ<sup>3</sup> օղում պարունակվող մոլեկուլների թիվը:

3) Մեկ մոլ նյութում պարունակվող մոլեկուլների թիվը:

4) Նյութի միավոր ծավալում պարունակվող մոլեկուլների թիվը:

13

Ո՞րն է Բոյլ-Մարիոտի օրենքն արտահայտող հավասարումը:

1)  $\frac{V_1}{V_2} = \frac{P_2}{P_1}$ :


2)  $\frac{P_1}{P_2} = \frac{V_1}{V_2}$ :

3)  $\frac{P_1}{P_2} = \frac{T_1}{T_2}$ :





4)  $\frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}$ :

14

Նկարում պատկերված է շրջանային պրոցեսում հաստատուն գանգվածով իդեալական գազի ճնշման՝ բացարձակ ջերմաստիճանից կախման գրաֆիկը: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում այդ պրոցեսին:



- 1) դ:
- 2) ս:
- 3) թ:
- 4) գ:



15


Ինչպե՞ս է փոխվում իդեալական գազի գանգվածը, եթե նրա բացարձակ ջերմաստիճանը փոքրացնում են 4 անգամ, իսկ ճնշումը՝ 2 անգամ: Գազի ծավալը հաստատուն է:

- 1) Փոքրանում է 2 անգամ:
- 2) Մեծանում է 8 անգամ:
- 3) Փոքրանում է 8 անգամ:
- 4) Մեծանում է 2 անգամ:

16

Նկարում պատկերված իզոբերմ պրոցեսի հետևանքուն հաստատուն գանգվածով իդեալական գազը A վիճակից անցնում է B վիճակին: Ինչպիսի՞ն է այդ դեպքում գազի ներքին էներգիայի փոփոխությունը:

- 1) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:
- 2)  $\Delta U > 0$ :
- 3)  $\Delta U < 0$ :
- 4)  $\Delta U = 0$ :



17

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Աղիարատ կոչվում է այն պրոցեսը, որի ընթացքում՝**

- 1) համակարգի և շրջապատի միջև ջերմափոխանակություն չի կատարվում:
- 2) համակարգի ներքին էներգիան չի փոխվում:
- 3) համակարգի ջերմաստիճանը չի փոխվում:
- 4) համակարգն աշխատանք չի կատարում:

18

Ինչի՞ համար է ծախսվում հալման պրոցեսում բյուրեղային մարմնի ստացած ջերմաքանակը:

- 1) Մարմնի մասնիկների կինետիկ էներգիան փոքրացնելու համար:
- 2) Մարմնի ջերմաստիճանը բարձրացնելու համար:
- 3) Բյուրեղը քայլայելու համար:
- 4) Մարմնի մասնիկների կինետիկ էներգիան մեծացնելու համար:

**19** Ինչպե՞ս է փոխվում համաստ ձողի կոշտությունը նրա լայնական հատույքի մակերեսը երկու անգամ մեծացնելիս:

- 1) Փորբանում է չորս անգամ:
- 2) Մեծանում է երկու անգամ:
- 3) Մեծանում է չորս անգամ:
- 4) Փորբանում է երկու անգամ:

**20** Քրդով շփելիս պլաստմասսայե քանոնը լիցքավորվում է քացասական լիցքով: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- 1) Պրոտոնները բրդից անցնում են քանոնին:
- 2) Էլեկտրոնները բրդից անցնում են քանոնին:
- 3) Պրոտոնները քանոնից անցնում են բրդին:
- 4) Էլեկտրոնները քանոնից անցնում են բրդին:

**21** Երկու տարրեր չափերով հաղորդիչ գնդերը լիցքավորում են և իրար միացնում հաղորդալարով: Լիցքերը վերաբաշխվելուց հետո  $n^o$  գնդի պոտենցիալը կլինի ավելի մեծ:

- 1) Պատասխանը կախված է միացումից առաջ գնդերի ունեցած լիցքերից:
- 2) Մեծ գնդինը:
- 3) Երկու գնդերի պոտենցիալները կլինեն հավասար:
- 4) Փոքր գնդինը:

**22** Առաջին դեպքում կոնդենսատորին հաղորդում են այնքան լիցք, որ նրա լարումն աճում է  $0$ -ից մինչև  $U$ , իսկ երկրորդ դեպքում  $U$  -ից մինչև  $2U$ :  $\Omega^o$  դեպքում է կոնդենսատորի էներգիան ավելի շատ մեծանում:

- 1) Երկու դեպքում էլ նույն չափով:
- 2) Առաջին դեպքում, 3 անգամ ավելի շատ:
- 3) Երկրորդ դեպքում, 3 անգամ ավելի շատ:
- 4) Երկրորդ դեպքում, 2 անգամ ավելի շատ:

23

Ո՞ր քանածեմ է ճիշտ արտահայտում մետաղե հաղորդչի դիմադրության կախումը  $t$  զերմաստիճանից ( $R_0$ -ն հաղորդչի դիմադրությունն է  $0^\circ C$ -ում,  $\alpha$ -ն՝ դիմադրության զերմաստիճանային գործակիցը>):

- 1)  $R = \frac{R_0}{1 + \alpha t}$ :
- 2)  $R = R_0 \alpha t$ :
- 3)  $R = R_0(1 - \alpha t)$ :
- 4)  $R = R_0(1 + \alpha t)$ :

24

Հաղորդչի ծայրերին կիրառված Ս լարման դեպքում և ժամանակամիջոցում անջատվում է  $Q$  զերմաքանակ: Ի՞նչ քանակությամբ լիցք է անցնում հաղորդչի լայնական հատույթով այդ ընթացքում:

- 1)  $\frac{Q}{U}$ :
- 2)  $\frac{QU}{t}$ :
- 3)  $\frac{Q}{Ut}$ :
- 4)  $\frac{Qt}{U}$ :

25


Ի՞նչ է էլեկտրական հոսանքը մետաղներում:

- 1) Էլեկտրոնների և դրական իոնների ուղղորդված շարժում:
- 2) Ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժում:
- 3) Ազատ էլեկտրոնների զերմային շարժում:
- 4) Դրական իոնների ուղղորդված շարժում:

26

Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի դիրքը մազնիսական դաշտում: Մազնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտորդը: Ի՞նչ ուղղություն ունի հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը:


- 1)  $\eta$ :
- 2)  $w$ :
- 3)  $p$ :
- 4)  $q$ :



27

Նկարում պատկերված են իրար ուղղահայաց համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածության  $\vec{E}$  և համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի  $\vec{B}$  վեկտորները ( $\vec{E} \perp \vec{B}$ ): Ինչպես պետք է ուղղված լինի էլեկտրոնի արագությունը, որպեսզի այդ դաշտերի համատեղ ազդեցությամբ այն շարժվի ուղղագիծ և հավասարաչափ:


- 1) Դիտողից դեպի նկարը:
- 2) Նկարից դեպի դիտողը:
- 3)  $\vec{B}$ -ի ուղղությամբ:
- 4)  $\vec{E}$ -ի ուղղությամբ:



28

Նկարում պատկերված մետաղե հարք շրջանակը համասեռ մագնիսական դաշտում տեղադրված է այնպես, որ նրա ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակի հարթությանը և ուղղված է դեպի նկարը: Շրջանակում կմակածվի՝ արդյոք հոսանք, եթե այն համընթաց շարժենք մագնիսական դաշտում:

- 1) Այո, եթե արագության մոդուլը նվազի:
- 2) Այո:
- 3) Չի մակածվի:
- 4) Այո, եթե արագության մոդուլն աճի:



29


$\Omega^{\circ}$  տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակիցն է 1-ից մեծ:

- 1) Կամայական տրանսֆորմատորի:
- 2) Բարձրացնող տրանսֆորմատորի:
- 3) Ցածրացնող տրանսֆորմատորի:
- 4) Որի առաջնային փաթույթի գալարների թիվը փոքր է երկրորդային փաթույթի գալարների թվից:

30

Նկարում պատկերված են լուսի գնդաներ  $S$  աղբյուրը, անթափանց  $A$  գունդը և էլիպանը:  $\Omega^{\circ}$  կետն է գտնվում ստվերում:

- 1)  $\eta$ :
- 2)  $p$ :
- 3)  $w, q$ :
- 4)  $w, p, q$ :



31

Հարք հայելում իր պատկերը դիտող աղջիկը մեկ քայլ կատարեց դեպի հայելին։ Ինչպես փոխվեց աղջկա և հայելում նրա պատկերի միջն եղած հեռավորությունը։

- 1) Չփոխվեց։
- 2) Փորրացավ մեկ քայլով։
- 3) Փորրացավ երկու քայլով։
- 4) Փորրացավ չորս քայլով։

32

Լույսի ճառագայթը զրից ( $n_1 = 1,33$ ) անցնում է ապակու ( $n_2 = 1,6$ ) մեջ։ Ինչպես է փոխվում այդ դեպքում լույսի արագությունը։

- 1) Պատասխանը կախված է անկման անկյունից։
- 2) Մեծանում է։
- 3) Փորրանում է։
- 4) Չի փոխվում։

33

Ո՞ր դեպքում է տեղի ունենում լույսի լրիվ անդրադարձում:  $\alpha$ -ն անկման անկյունն է,  $\alpha_0$ -ն՝ լրիվ անդրադարձման սահմանային անկյունը։

- 1) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել։
- 2)  $\alpha_0 > \alpha$ ։
- 3)  $\alpha_0 \leq \alpha$ ։
- 4)  $\cos \alpha_0 < \cos \alpha$ ։

34

Ո՞ր գույնի լույսին համապատասխանող ալիքն է ավելի մեծ արագությամբ տարածվում ապակու մեջ։

- 1) Մանուշակագույն։
- 2) Կապույտ։
- 3) Կարմիր։
- 4) Կանաչ։

35

Բենզինի բարակ թաղանթով պատված ջրի մակերևույթին առաջանում են ծխածանի գունավորումներ։ Ֆիզիկական ո՞ր երևույթով է դա պայմանավորված։

- 1) Լույսի ինտերֆերենցով։
- 2) Լույսի դիսպերսիայով։
- 3) Լույսի դիֆրակցիայով։
- 4) Լույսի բևեռացմամբ։

36

Դադարի վիճակում ավտոմեքենայի լուսարձակների առաքած լույսի արագությունը գետնի նկատմամբ  $c$  է: Որքա՞ն կլինի լույսի արագությունը, եթե ավտոմեքենան շարժվի  $v$  արագությամբ:

- 1)  $c+v$ :
- 2)  $c$ :
- 3)  $\frac{c}{2}$ :
- 4)  $c-v$ :

37

Ո՞րն է ալիքի  $\lambda$  երկարությամբ ֆոտոնի էներգիայի ճիշտ բանաձևը:

- 1)  $\frac{hc}{\lambda}$ :
- 2)  $h\lambda$ :
- 3)  $\frac{h}{\lambda}$ :
- 4)  $\frac{hc}{\lambda^2}$ :

38

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Ռեզերֆորդի մոդելի՝ ատոմի միջուկում կենտրոնացված են...

- 1) ատոմի զանգվածի շնչին մասը և ամբողջ բացասական լիցքը:
- 2) ատոմի գրեթե ամբողջ զանգվածը և ամբողջ դրական լիցքը:
- 3) ատոմի ամբողջ զանգվածը և բացասական լիցքը:
- 4) ատոմի զանգվածի շնչին մասը և ամբողջ դրական լիցքը:





39

Ո՞ր մեծությունն են անվանում զանգվածային թիվ:

- 1) Միջուկում պլոտոնների և նեյտրոնների թիվը:
- 2) Միջուկում պլոտոնների թիվը:
- 3) Միջուկի զանգվածը:
- 4) Ատոմի զանգվածը:

40

Ո՞ր միջուկային ռեակցիան հնարավոր չէ, քանի որ խախտվում է լիցքի պահպանման օրենքը:



41

Արեգակը հորիզոնից բարձր է  $10^0$ : Հորիզոնի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի նրանից անդրադարձած ճառագայթն ուղղված լինի ուղղաձիգ դեպի վեր:

42

Տրված է սարից սահող դահուկորդի շարժման հավասարումը՝  $x = 0,2t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՍՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է դահուկորդի արագությունը վայրէջքի վերջում, եթե այն տևում է  $10$  վ:

43

Հեղուկի մեջ լրիվ խորասուզելիս 1 դմ<sup>3</sup> ծավալով մարմնի վրա ազդում է 8 Ն արքիմեդյան ուժ: Որքա՞ն է այդ հեղուկի խտությունը: Ազատ անկման արագացումը 10 մ/վ<sup>2</sup> է:

44

4 Օմ, 6 Օմ և 12 Օմ դիմադրություններով երեք լամպեր միացված են զուգահեռ: Որքա՞ն է լամպերի ընդհանուր դիմադրությունը:

(45-46) Կալիումի համար ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը  $6,6 \cdot 10^{-7}$  մ է: Պլանկի հաստատունը  $6,6 \cdot 10^{-34}$  ՋՎ է, վակուումում լույսի արագությունը՝  $3 \cdot 10^8$  մ/վ:

45

Որքա՞ն է էլեկտրոնի ելքի աշխատանքը կալիումի համար: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ - ով:

46

Որքա՞ն է  $4,4 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ լույսի ազդեցությամբ կալիումից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ - ով:

(47-48) Հորիզոնական հաստատուն ուժի ազդեցությամբ 200 կգ զանգվածով մարմինը հավասարաչափ շարժվում է հորիզոնական մակերևույթով՝ այդ ուժի ազդման ուղղությամբ: Մարմնի և մակերևույթի միջև շփման գործակիցը  $0,003$  է, ազատ անկման արագացումը՝  $10 \text{ м/с}^2$ :

47

Որքա՞ն է մարմնի վրա ազդող շփման ուժը:


48

Որքա՞ն է շփման ուժի կատարած աշխատանքի մոդուլը 100 մ ճանապարհի վրա:

(49-50) Նկար 1-ում պատկերված շղթայում  $R_1 = 2 \text{ Ом}$ ,  $R_2 = 1 \text{ Ом}$ ,  $R_3 = 2 \text{ Ом}$ , իսկ  $U = 24 \text{ В}$ :

49

Որքա՞ն է շղթայի ընդհանուր հոսանքը:



Նկ. 1

50


Որքա՞ն է  $R_3$  դիմադրությունով անցնող հոսանքը:

(51-52) Տատանողական կոնտուրում կոնդենսատորի ունակությունը  $16 \cdot 10^{-4}$  Ֆ է, իսկ լարման լայնութային արժեքը՝ 200 Վ:

51 Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիայի առավելագույն արժեքը:

52 Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիան, եթե լարումը կոնդենսատորի վրա 50 Վ է:

(53-54) Լույսի ճառագայթն ուղղահայաց ընկնում է 2-րդ նկարում պատկերված  $\alpha = 30^\circ$  բեկող անկյուն ունեցող հատվածակողմի  $AB$  նիստին և դուրս գալիս նրանից այնպես, որ ելքում ճառագայթը  $BC$  նիստի հետ նույնպես կազմում է  $\alpha = 30^\circ$  անկյուն: Հատվածակողմի  $BC$  նիստն ուղղահայաց է  $AC$  նիստին:



Նկ. 2

53 Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը  $BC$  նիստի վրա:

54 Որքա՞ն է հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը: Ընդունել՝  $\sqrt{3} = 1,7$ : Պատասխանը բազմապատկել 10- ով:

(55-57) Էկրանին ստացվում է հավաքող բարակ ոսպնյակից որոշ հեռավորությամբ տեղադրված առարկայի 2 անգամ խոշորացված պատկերը: Այնուհետև առարկան մոտեցնում են ոսպնյակին 0,2 մ-ով և, շարժելով էկրանը, նորից ստանում են առարկայի հստակ պատկերը՝ այս դեպքում 4 անգամ խոշորացված:

55

Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից առաջին դեպքում: Պատասխանը բազմապատկեք 10- ով:


56

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

57

Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից երկրորդ դեպքում:

(58-60) Ողորկ սկավառակը  $\omega = 4 \text{ ռադ/վ}$  անկյունային արագությամբ պտտվում է ուղղաձիգ առանցքի շուրջը (նկ. 3): Սկավառակի պտտման առանցքին հողակապով ամրացված է  $L = 0,5$  մ երկարությամբ ձող: Զողի ազատ ծայրին ամրացված 20 կգ զանգվածով գնդիկը հենված է սկավառակին և պտտվում է նրա հետ: Զողը սկավառակի մակերևույթի հետ կազմում է:  $\alpha = 60^\circ$  անկյուն: Ազատ անկման արագացումը  $10 \text{ մ/վ}^2$  է:  
 $\text{Ընդունել՝ } \sqrt{3} = 1,7:$



58 Որքա՞ն է գնդիկի արագացումը:

59 Որքա՞ն է ձողի լարման ուժը:

60 Որքա՞ն է սկավառակի վրա ազդող գնդիկի ճնշման ուժը:

(61-64) Էլեկտրական դաշտում հանգստի վիճակից արագացված պրոտոնը մտնում է մագնիսական դաշտ, ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Մագնիսական դաշտում պրոտոնը շարժվում է  $0,2$  մ շառավղով աղեղով: Պրոտոնի շարժման արագության ուղղությունը  $10^{-7}$ Վ-ի ընթացքում փոխվում է  $45^{\circ}$ -ով: Պրոտոնի զանգվածն ընդունել  $1,6 \cdot 10^{-27}$  կգ, լիցքը՝  $1,6 \cdot 10^{-19}$  Կլ:

61

Որքա՞ն է պրոտոնի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:

62

Որքա՞ն է պրոտոնի շարժման արագությունը: Ընդունել՝  $\pi=3$ : Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:

63

Որքա՞ն է պրոտոնին արագացնող պտենցիալների տարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:

64

Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիան: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

(65-68) Երկու ծայրերը գողված հորիզոնական խողովակը 0,1 կգ զանգվածով բարակ միտցով բաժանված է երկու հավասար մասերի, որոնցից յուրաքանչյուրում գտնվում է զազ  $2 \cdot 10^5$  Պա ճնշման տակ: Խողովակի երկարությունը 0,6 մ է, լայնական հասույթի մակերեսը՝  $2 \cdot 10^{-4}$  մ<sup>2</sup>: Խողովակը առանցքի երկայնքով հաստատուն արագացմամբ շարժում են ձախից աջ, որի հետևանքով միտցը տեղաշարժվում է 0,1 մ-ով: Զերմաստիճանը համարել հաստատուն: Խողովակի և միտցի շփումն անտեսել: Ընդունել՝  $\sqrt{2} = 1,4$ :

65

Որքա՞ն է զազի ճնշումը խողովակի ձախ մասում, խողովակը շարժելու ընթացքում: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:

66

Որքա՞ն է զազի ճնշումը խողովակի աջ մասում, խողովակը շարժելու ընթացքում: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:

67

Որքա՞ն է խողովակի շարժման արագացումը:


68

Որքա՞ն կտեղաշարժվի միտցը, եթե խողովակը շարժենք առանցքի երկայնքով 400 մ/վ<sup>2</sup> արագացմամբ: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

69

Աշակերտը կարմիր և կապոյտ լուսի երկու ճառագայթների նեղ փնջերը միևնույն ուղղի երկայնքով ուղղեց օղում գտնվող ապակե եռանկյուն պրիզմայի վրա, ինչպես ցույց է տրված նկ. 4-ում: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված չէ լուսի ալիքի երկարությունից:
- 2) Պրիզմայի բեկող անկյունը  $\theta$ -ն է:
- 3) Պրիզման անցած ճառագայթներից կապոյտը 1-ն է:
- 4) Կարմիր ճառագայթի շեղման անկյունը  $\delta$ -ն է:
- 5) ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված է պրիզմայի բեկող անկյունից:
- 6) ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված չէ պրիզմայի բեկման ցուցչից:



Նկ. 4

70

$v_0$  արագությամբ շարժվող  $m$  զանգվածով գունդը բախվում է նույն զանգվածով անշարժ գնդին: Բախումը կենտրոնական է և բացարձակ առաձգական: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել առաջին գնդի շարժման սկզբնական ուղղությամբ:
- 2) Բախման արդյունքում համակարգի իմպուլսը փոքրանում է:
- 3) Բախման արդյունքում համակարգի ընդհանուր մեխանիկական էներգիան չի փոխվում:
- 4) Բախումից հետո համակարգի կիսնետիկ էներգիան  $mv_0^2 / 2$  է:
- 5) Բախումից հետո գնդերը շարժվում են միևնույն ուղղությամբ:
- 6) Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել  $v_0$  արագությամբ: